կեր է ներկայացնում վերոյիշեալ 867,671 թիւը (եւ կամ պլիւս, բոլշեւիկ վարիչների ցանկութեամբ, շուրջ 50 հազար)։

Նկատի ունենալով սակայն 1924-ին Անդրկովկասում եւ 1925 թուի յունուար 1-ին Հայաստանում տեղի ունեցած վարչական վիճակագրութիւնը, որի համաձայն 1925 յունուար 1-ին Հայաստան ունեցել է 910,000 բնակիչ, եւ որից 782 հազարը (ասել է՝ 86 առ հարիւրը) հայ, 90 հազարը թրքո-թաթար, 18,480-ը ռուս, 13 հազարը եզիդի, եւայլն, ենթադրելով նաեւ, որ 1924-ի ու 1926-ի տուեալների մէջ տոկոսային խոշոր տարբերութիւն չէր կարող ներկայացնել Հայաստանի ազգաբնակութիւնը ըստ ցեղային կազմի, ապա ուրեմն ընդունել պէտք է, որ 1926-ին եւս (այժմ էլ նոյնը) հայութիւնը կազմել է ու կազմում է 86% երկրի բնակչութեան։

IV

Յետագայ տողերի մէջ կանգ կ'առնենք անդրկովկասեան մեր հարեւան երկիրների՝ Վրաստանի եւ Ադրբէջանի հողային ու ազգաբնակչական կարողութիւնների վրայ եւս։ Բաղդատութեան համար այժմէն իսկ գրի առնենք մի քանի թուեր եւ անցնենք։

Այն է՝ Հայաստանի 30,000 քառակուսի քիլոմէտր (26,555 քառ. վերստ, այլ տուեալներով՝ 26,358 վերստ տարածութեան) եւ 867,000 բնակչութեան (1926 դեկտ.) դիմաց՝ Ադրբէջանը ունի շուրջ 86,000 քառ. քլմ. (74,989 քառ. վերստ) տարածութիւն եւ, համաձայն 1926-ի վիճակագրութեան, 2,301,788 բնակիչ։ Վրաստանն ունի շուրջ 69,000 քառակուսի քիլոմէտր (60,282 քառ. վերստ) տարածութիւն եւ 2,621,019 բնակիչ։

Ընթերցողը շարունակ յիշելո՛ւ է այս թըւերը։ Դրանք մեզ ասում են ուրեմն, որ Խորհըրդային Հայաստանը տարածութեամբ $2\frac{1}{3}$ անգամ փոքր է Խորհրդային Վրաստանից, գըրեթէ 3 անգամ էլ՝ Խորհրդային Ադրբէջանից։ Ինչ ազգաբնակչութեա՛ն թուին է վերաբերում, մեր հայրենիքը իր արդի սահմաններում հաշւում է ուրեմն 3 անգամ աւելի պակաս ժողովուրդ քան Վրաստանը եւ $2\frac{2}{3}$ անգամ էլ պակաս՝ քան Ադրբէջանը։

Այս թուական իրողութիւնները ամենաէական, բախտորոշ նշանակութիւնն ունին ինչպէս շատ եւ շատ, այնպէս եւ մեր ազգային քաղաքականութեան պարզաբանման եւ յստակ ձեւակերպման տեսակէտից։ Դրանց բաղդատական եւ քաղաքական արժէքին անցնելուց առաջ տեսնենք սակայն, թէ Հայաստանի բնակչութիւնը մի կողմից եւ հայ բնակչութիւնը (Անդրկովկասում) միւս կողմից ինքն իր մէջ ի՞նչ պատկեր էր ներկայացնում նախապատերազմեան շրջանում եւ ինչ՝ մեր օրերում։

Ուրիշ խօսքով՝ վերահասու լինինք փոքր ինչ, թէ Հայաստանը եւ Անդրկովկասեան հայութիւնը ազգաբնակչական ի՛նչ շարժումներ է ցուցահանում, ինչ բաղդատութիւն է ներկայացնում ի՛նքն իր մէջ, անցեալը եւ ներկան առնելով որպէս համեմատութեան եզրեր։ Այդ հարցերի պատասխանն էլ ցոյց կը տայ մեզ քաղաքական այն հաւանական տենդենցը, որ յատուկ պիտի լինի նրան, բխի նրա թուական իրականութիւնից։

1897-ի համառուսական վիճակագրութեամբ՝ հայերի թիւը Անդրկովկասում հաշուըւում էր 1,086,980, իսկ ամբողջ Կովկասում՝ 1,118,094։ Կովկասից դուրս, մնացեալ Ռուսաստանում, հայերի թիւն էր նոյն 1897-ին՝ 55,002, որով ամբո՛ղջ Ռուսաստանում ապրում էին 1,173,096 հայեր։

1897-ի թուական տուեալները յարմար են բաղդատութեան տեսակէտից թէ՛ նրա համար, որ գէթ մօտաւոր չափով ստո՛յգ են եւ թէ՛ միւս կողմից, ժամանակագրակա՛ն տեսակէտից։ Այդ իսկ նկատի ունենալով, այս կապակցութեան մէջ յիշատակենք նախընթաց ժամանակաշրջաններին եւս վերաբերող մեզ յայտնի մի քանի թուական տուեալներ։

Այսպէս, Անդրկովկասի հայութեան թիւը 1838-ին, նայելով վարչական այն վիճակագըրութեան, որ կազմակերպել էր ժամանակի ռուս իշխանութիւնը եւ որի ամփոփումը տուել են ֆոն Շոպէն եւ ֆոն Քէօպէն, եղել է 294,606։

Ֆոն Շոպէնը (von Chopin) երկար տարիներ Անդրկովկասում վարելիս է եղել ելմտական պատասխանատու պաշտօն եւ, աւելի քան մի ուրիշը, ծանօթ տեղական պայմաններին։